Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-442[4]-25.11.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքը կարգավորում է ոստիկանությունում ծառայության հիմնական սկզբունքները, ոստիկանությունում ծառայություն անցնելու կարգը և ծառայության պայմանները, ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ոստիկանության պաշտոններն ու կոչումները, ծառայության հետ կապված այլ հիմնական հարաբերություններ:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը՝

1) 1-ին մասից հանել «հատուկ» բառը:

2) 2-րդ մասի 3-րդ պարբերությունում «Կառավարության որոշմամբ» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ղեկավարի հրամանով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում, 5.1-ին հոդվածի 3-րդ մասում, 11-րդ հոդվածի 6-րդ մասում, 13-րդ հոդվածի 10-րդ մասում, 14-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունում, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, 43-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունում, 47-րդ հոդվածի 3-րդ մասում, 54-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերում և 55-րդ հոդվածում «Ոստիկանության պետը» և «Ոստիկանության պետի» բառերը փոխարինել համապատասխանաբար «Լիազոր մարմնի ղեկավարը» և «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «Ոստիկանության կողմից» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի կողմից» բառերով, իսկ «քաղաքացիները» բառերից հետո լրացնել «, որոնք սովորում են ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով»:

Հոդված 5. Օրենքի ամբողջ տեքստում «Ոստիկանության ուսումնական հաստատություն» բառերը և համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Լիազոր մարմնի ուսումնական հաստատություն» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետից «այդ թվում՝ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ,» և «այդ թվում՝ մարզային վարչության պետ,» բառերը հանել.

2) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների, ազգային անվտանգության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական ծառայության հիմնական պաշտոնների, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, դատախազության պաշտոնների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոնների և հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոնների (այդ թվում ինքնավար պաշտոնների) միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր կոչումները շնորհում է ծառայողին ոստիկանության համապատասխան պաշտոնին նշանակելու կամ որպես սովորող հրամանագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:».

3) 5-րդ մասը «ցմահ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով.

4) 8-րդ մասը «հիմքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված փորձաշրջանի ընթացքում» բառերը:

Հոդված 8. Օրենքի 5.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանության բարձրագույն կոչումները, բացառությամբ ոստիկանության զորքերի հրամանատարի, շնորհում է վարչապետը՝ Լիազոր

մարմնի ղեկավարի առաջարկությամբ: Ոստիկանության զորքերի հրամանատարի դեպքում ոստիկանության բարձրագույն կոչում շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Վարչապետը առաջարկություն կարող է ներկայացնել սեփական նախաձեռնությամբ կամ Լիազոր մարմնի ղեկավարի միջնորդության հիման վրա:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Լիազոր մարմնի ղեկավարի միջնորդությունը ներկայացվում է սույն հոդվածի 2-3-րդ մասերով սահմանված պահանջներին համապատասխան:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Վարչապետի կողմից ոստիկանության բարձրագույն կոչում շնորհվելու դեպքում Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությունը պետք է պարունակի սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տվյալները:»:

Հոդված 9. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանությունում կամ սույն մասում նախատեսված մարմիններում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան ունեցող քաղաքացիներին Ոստիկանությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ պահեստազորում ունեցած կոչմանը համապատասխան ոստիկանության կոչում: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում, ազգային անվտանգության մարմիններում շնորհված զինվորական կոչումների, փրկարար ծառայության կոչումների, քրեակատարողական, հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, դատախազությունում շնորհվող արդարադատության կոչումների և դասային աստիճանների, պահեստազորում ունեցած կոչումների

համապատասխանությունը ոստիկանության կոչումներին սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը՝

ա) 1-ին կետում ««Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ»-«ե» կետերով, 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերի» բառերով.

բ) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) համապատասխանում է ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության և առողջական վիճակի հետ կապված պահանջներին:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առանձին պաշտոններում ոստիկանությունում ծառայության անցնելու համար Կառավարության որոշմամբ կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ:».

3) 3-րդ մասում «մասնագիտական,» բառը հանել, իսկ «Կառավարությունը:» բառից հետո լրացնել «Ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանվում են Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված կոնկրետ պաշտոնի անձնագրով:» նախադասությունը:

4) 4-րդ մասը՝

ա) 2-րդ կետի «քաղաքացիական կամ այլ ծառայությունում» բառերը փոխարինել «հանրային ծառայության» բառերով.

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին, 3.2-րդ, 3.3-րդ և 3.4-րդ կետերով.

«3.1) որը կատարել է դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարք, և նրա նկատմամբ առկա է ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

3.2) որը նախկինում հանրային ծառայության պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման արդյունքում, եթե նման տույժի կիրառումից չի անցել մեկ տարի.

3.3) որը տառապում է ոստիկանության ծառայողի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող՝ Կառավարության կողմից սահմանված հիվանդությամբ.

3.4) որը օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.».

5) 6-րդ մասում «փաստաթղթերի ցանկը» բառերից հետո լրացնել «, թեկնածուների ընտրության» բառերը:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում «պետական դրոշի» բառերը փոխարինել «դրոշի» բառով:

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածը՝

1) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանության պետին Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

3. Ոստիկանության պետի տեղակալներին Ոստիկանության պետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը: ».

.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ոստիկանության գլխավոր պաշտոնների խմբի ծառայողներին պաշտոնի նշանակում (ծառայության է ընդունում) և պաշտոնից ազատում է Լիազոր մարմնի

ղեկավարը, իսկ ավագ և միջին պաշտոնների խմբերի ծառայողներին՝ Ոստիկանության պետը:».

3) լրացնել հետևյալ խմբագրությամբ 5.1-ին մասով.

«5.1. Լիազոր մարմնում, վերջինիս ենթակայությամբ գործող պետական այլ մարմիններում կամ ենթակայությանը հանձնված կազմակերպություններում՝ բացառությամբ ոստիկանության, ոստիկանության ծառայողներին պաշտոնի նշանակում (ծառայության է ընդունում) և պաշտոնից ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը:».

4) 9-րդ մասում «մասերով» բառից հետո լրացնել «նախատեսված պայմանների հաշվառմամբ՝ սույն օրենքի 13.1-ին հոդվածով» բառերը:

Հոդված 13. Օրենքի 13.1-ին հոդվածը՝

1) 1-ին մասում «վարչապետի» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Ոստիկանության պետի տեղակալներ նշանակելու կամ ազատելու մասին Ոստիկանության պետի առաջարկությունը ներկայացվում է գրավոր և ներառում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները:».

3) 2-7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

4) 8-րդ մասում.

ա. հանել «Ոստիկանության պետի տեղակալներ և » բառերը,

բ. 1-ին և 2-րդ կետերից հանել «Ոստիկանության պետի տեղակալներ կամ » բառերը:

Հոդված 14. Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի՝

ա. 2-րդ պարբերությունում «(բարոյական)» բառը հանել.

բ. 4-րդ պարբերության «վերջին մեկ տարին» բառերը փոխարինել «մեկ տարի» բառերով.

2) 3.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 6-րդ մասում՝

ա. «մասնագիտական կամ» բառերից հետո «Կառավարության կողմից» բառերը փոխարինել «տվյալ պաշտոնի անձնագրով» բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ կետեր.

«1.1) ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցված ծառայողները.

1.2) այլ պաշտոնից փոխադրվող (այդ թվում՝ առաջխաղացման կարգով) ոստիկանության ծառայողները.».

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետ.

«2.1) սույն հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերությամբ նախատեսված անձինք.».

դ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և առաջին անգամ ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները:».

4) 7-րդ մասում «Կառավարության կողմից» բառերը փոխարինել «Պաշտոնի անձնագրով» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.2-րդ մաս.

«9.2. Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում առաջնահերթության կարգով պաշտոնի է նշանակվում ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցված ծառայողը:».

6) 10-րդ մասի՝

ա. 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, ինչպես նաև վերջին 5 տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները: Սույն պարբերությամբ սահմանված դեպքում նշանակումից հետո ծառայողն անցնում է պարտադիր վերապատրաստում:».

բ. 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

գ. 4-րդ պարբերությունում «կասեցվելու» բառը փոխարինել «դադարեցվելու» բառով, իսկ «կամ ոստիկանությունում ծառայության անցնող անձին» բառերը հանել.

7) 11-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 15. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում «Կառավարությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 16. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում, 22-րդ հոդվածում, 41-րդ հոդվածի 5-րդ մասում և 48-րդ հոդվածի 1-ին մասում ««Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով» բառերով:

Հոդված 17. Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասում «Ոստիկանության պետի նորմատիվ» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում «Կարգապահական խախտման՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում» բառերը փոխարինել «Սույն օրենքի 42.1-ին հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում» բառերով.

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետով՝

«11) սույն օրենքի 39-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի պահանջները խախտելը:»:

Հոդված 19. Օրենքում լրացնել հետևյալ խմբագրությամբ 42.1-ին հոդված.

«**Հոդված 42.1. Ոստիկանության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը**

1. Ոստիկանության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) իր լիազորություններն իրականացնելիս օրենքը խախտելը.

2) սույն օրենքով կամ ոստիկանության գործառույթները կարգավորող այլ օրենքներով նախատեսված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) ոստիկանության կարգապահական կանոնագրքով սահմանված կանոնները խախտելը.

4) սույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները խախտելը:»:

Հոդված 20. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով կարող են հանվել մեկից ավելի կարգապահական տույժերը:».

2) 6-րդ մասի՝

ա. 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցողը:».

բ. 4-րդ պարբերության 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կիրառելու իրավունքը վերապահվում է Լիազոր մարմնի ղեկավարին, իսկ ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կիրառելու իրավունքը՝ Ոստիկանության պետին:»:

Հոդված 21. Օրենքի 45-րդ հոդվածը՝

1) 1-ին մասը՝

ա. լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1-ին կետով.

«1.1) երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ.»,

բ. 2-րդ կետում «, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ» բառերը հանել,

գ. 9-րդ կետում «, այդ թվում՝ դատարանի դատավճռով ոչ ռեաբիլիտացնող հիմքերով պատժից ազատվելու կամ պատիժը կրելը հետաձգելու» բառերը հանել,

դ. լրացնել հետևյալ խմբագրությամբ 9.1-ին կետով,

«9.1) դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարքի առնչությամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.».

2) 1.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

3) 2-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «(պաշտոնատար անձը)» բառերը.

4) լրացնել հետևյալ խմբագրությամբ 3-րդ մասով.

«3. Ոստիկանության ծառայողին սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ և 9.1-ին կետերով նախատեսված հիմքով ոստիկանությունում ծառայությունից ազատելու դեպքում ոստիկանությունում ծառայության ստաժի մեջ չեն հաշվարկվում պաշտոնավարումը կասեցված լինելու, ազատությունից փաստացի զրկված (ձերբակալված կամ կալանավորված) լինելու ժամանակահատվածները, եթե նշված հարկադրանքի միջոցները կիրառելու մասին որոշումներն օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել ոչ իրավաչափ:»:

Հոդված 22. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «(պաշտոնատար անձը)» բառերը:

Հոդված 23. Օրենքի 47-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող ծառայողի՝ Ոստիկանության պետի ծառայության ժամկետը երկարաձգվում է սույն օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված կարգով՝ վարչապետի կողմից՝ Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ, Ոստիկանության պետի տեղակալների դեպքում ծառայության ժամկետը երկարաձգվում է սույն օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված կարգով՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ Ոստիկանության պետի առաջարկությամբ, իսկ Ոստիկանության զորքերի հրամանատարի դեպքում՝

Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ և Լիազոր մարմնի միջնորդությամբ:».

2) 3-րդ մասում «Ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով.

3) 4-րդ մասում «եթե Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «եթե համապատասխանաբար Ոստիկանության պետը կամ Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով.

4) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիազոր մարմնում, վերջինիս ենթակայությամբ գործող պետական այլ մարմիններում կամ ենթակայությանը հանձնված կազմակերպություններում փորձաքրեագիտական, պրոֆեսորադասախոսական, ծրագրավորման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի, լրատվական, գիտահետազոտական, բժշկական բնույթի մասնագիտական պաշտոններ զբաղեցնող ծառայողները կարող են ծառայությունը շարունակել մինչև 65 տարին լրանալը:»:

Հոդված 24. Օրենքի 49-րդ հոդվածը՝

1) 1-ին մասի «սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգապահական տույժի ենթարկված ոստիկանության ծառայողները, ինչպես նաև» բառերը հանել, իսկ «2-3-րդ կետերով» բառերը փոխարինել «2-րդ, 3-րդ, 5-րդ և 7-րդ կետերով» բառերով.

2) լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցվում են նաև սույն օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված կարգով պաշտոնից ազատված՝ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողները:».

3) 5-րդ մասում «Կառավարությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 25. Օրենքի 54-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 54. Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունը».**

2) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունը Լիազոր մարմնի ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի գործունեության նպատակներն ու խնդիրները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:».

3) 3-րդ մասում «Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 26. Օրենքի 55-րդ հոդվածը՝

1) 1-ին մասում «Ոստիկանական» բառից հետո լրացնել «նախնական և» բառերը.

2) 5-րդ մասում «ոստիկանության կադրային ստորաբաժանման» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով.

3) 10-րդ մասում «հաստատությունում» բառից հետո լրացնել «ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով» բառերը, իսկ «Ոստիկանության պետը շնորհում» բառերը փոխարինել «շնորհվում» բառով:

Հոդված 27. Օրենքի 56-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 28. Օրենքի 57-րդ հոդվածում «Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 29. Օրենքի 58-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 58. Ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող և քաղաքացիական աշխատանք կատարող անձինք**»,

2) 1-ին պարբերությունում «տեխնիկական սպասարկում իրականացնող» բառերից հետո լրացնել «և քաղաքացիական աշխատանք կատարող» բառերը:

Հոդված 30. Օրենքի 60.14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Օրենքով կարող է նախատեսվել քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականություն:»:

Հոդված 31. Օրենքի 60.15-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) 22-րդ կետով նախատեսված հիմքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ազատված անձինք.»:

Հոդված 32. Օրենքի 60.27-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-րդ կետով.

«22) Սույն օրենքի 60.14-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված վերապատրաստումը չանցնելը:»:

Հոդված 33. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ոստիկանության նոր կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերի, 30-32-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը, իսկ 3-րդ, 5-րդ, 8-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 20-րդ, 23-րդ և 28-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում Ներքին գործերի

նախարար նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրը ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն մասի ուժի մեջ մտնելուց հետո Ոստիկանության պետը և նրա տեղակալները համարվում են իրենց պաշտոններում պարտականությունները ժամանակավոր կատարողներ և շարունակում են պաշտոնավարել մինչև այդ պաշտոններում նշանակումներ կատարելը:

3. Սույն օրենքի 27-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում Բժշկական օգնության և սպասարկման հարաբերությունները կանոնակարգող նոր իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրը:

4. Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը Ներքին գործերի նախարարի ներկայացմամբ, սույն մասի ուժի մեջ մտնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, հաստատում է այն պաշտոնների ցանկը (որոնք ներառված չեն ոստիկանության հաստիքացուցակում), որոնց վրա, Ներքին գործերի նախարարության կազմավորման գործընթացի կազմակերպմամբ պայմանավորված, տարածվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի պահանջները: Այդ ցանկում ներառված պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխանաբար համարվում են ոստիկանության ծառայող և քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայող: Նախարարության կազմավորման ավարտից հետո, Ներքին գործերի նախարարի ներկայացմամբ Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը դադարեցնում է իրավական ակտի գործողությունը:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ (Կ-442[4]-25.11.2022-ՊԻ-011/1) ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջին ընթերցում

Կ-442[4]-25.11.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքը կարգավորում է ոստիկանությունում ծառայության հիմնական սկզբունքները, ոստիկանությունում ծառայություն անցնելու կարգը և ծառայության պայմանները, ծառայության հետ կապված՝ ծառայողների իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները, ոստիկանության պաշտոններն ու կոչումները, ծառայության հետ կապված այլ հիմնական հարաբերություններ:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածը՝

3) 1-ին մասից հանել «հատուկ» բառը:

4) 2-րդ մասի 3-րդ պարբերությունում «Կառավարության որոշմամբ» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ղեկավարի հրամանով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունում, 5.1-ին հոդվածի 3-րդ մասում, 11-րդ հոդվածի 6-րդ մասում, 13-րդ հոդվածի 10-րդ մասում, 14-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ պարբերությունում, 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, 43-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունում, 47-րդ հոդվածի 3-րդ մասում, 54-րդ հոդվածի 6-րդ, 7-րդ, 8-րդ մասերում և 55-րդ հոդվածում «Ոստիկանության պետը» և «Ոստիկանության պետի» բառերը փոխարինել համապատասխանաբար «Լիազոր մարմնի ղեկավարը» և «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «Ոստիկանության կողմից» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի կողմից» բառերով, իսկ «քաղաքացիները» բառերից հետո լրացնել «, որոնք սովորում են ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով»:

Հոդված 5. Օրենքի ամբողջ տեքստում «Ոստիկանության ուսումնական հաստատություն» բառերը և համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Լիազոր մարմնի ուսումնական հաստատություն» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 6. Օրենքի 4-րդ հոդվածի՝

3) 1-ին մասի 2-րդ կետից «այդ թվում՝ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ,» և «այդ թվում՝ մարզային վարչության պետ,» բառերը հանել.

4) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանության պաշտոնների առանձին խմբերում ընդգրկվող հիմնական պաշտոններին հավասարեցված պաշտոնների անվանացանկը սահմանում է Լիազոր մարմնի ղեկավարը:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների, ազգային անվտանգության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական ծառայության հիմնական պաշտոնների, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, դատախազության պաշտոնների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոնների և հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոնների (այդ թվում ինքնավար պաշտոնների) միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 5-րդ հոդվածի՝

5) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

6) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր կոչումները շնորհում է ծառայողին ոստիկանության համապատասխան պաշտոնին նշանակելու կամ որպես սովորող հրամանագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:».

7) 5-րդ մասը «ցմահ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով.

8) 8-րդ մասը «հիմքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված փորձաշրջանի ընթացքում» բառերը:

Հոդված 8. Օրենքի 5.1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանության բարձրագույն կոչումները, բացառությամբ ոստիկանության զորքերի հրամանատարի, շնորհում է վարչապետը՝ Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ: Ոստիկանության զորքերի հրամանատարի դեպքում ոստիկանության բարձրագույն կոչում շնորհում է Հանրապետության նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: Վարչապետը առաջարկություն կարող է ներկայացնել սեփական նախաձեռնությամբ կամ Լիազոր մարմնի ղեկավարի միջնորդության հիման վրա:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Լիազոր մարմնի ղեկավարի միջնորդությունը ներկայացվում է սույն հոդվածի 2-3-րդ մասերով սահմանված պահանջներին համապատասխան:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մաս.

«9. Վարչապետի կողմից ոստիկանության բարձրագույն կոչում շնորհվելու դեպքում Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությունը պետք է պարունակի սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տվյալները:»:

Հոդված 9. Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանությունում կամ սույն մասում նախատեսված մարմիններում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան ունեցող քաղաքացիներին Ոստիկանությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ պահեստազորում ունեցած կոչմանը համապատասխան ոստիկանության կոչում: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում, ազգային անվտանգության մարմիններում շնորհված զինվորական կոչումների, փրկարար ծառայության կոչումների, քրեակատարողական, հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում,

քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, դատախազությունում շնորհվող արդարադատության կոչումների և դասային աստիճանների, պահեստազորում ունեցած կոչումների համապատասխանությունը ոստիկանության կոչումներին սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 10. Օրենքի 11-րդ հոդվածի՝

6) 1-ին մասը՝

ա) 1-ին կետում ««Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ»-«ե» կետերով, 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը փոխարինել ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերի» բառերով.

բ) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) համապատասխանում է ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստականության և առողջական վիճակի հետ կապված պահանջներին:».

7) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Առանձին պաշտոններում ոստիկանությունում ծառայության անցնելու համար Կառավարության որոշմամբ կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ:».

8) 3-րդ մասում «մասնագիտական,» բառը հանել, իսկ «Կառավարությունը:» բառից հետո լրացնել «Ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանվում են Լիազոր մարմնի ղեկավարի կողմից հաստատված կոնկրետ պաշտոնի անձնագրով:» նախադասությունը:

9) 4-րդ մասը՝

ա) 2-րդ կետի «քաղաքացիական կամ այլ ծառայությունում» բառերը փոխարինել «հանրային ծառայության» բառերով.

բ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին, 3.2-րդ, 3.3-րդ և 3.4-րդ կետերով.

«3.1) որը կատարել է դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարք, և նրա նկատմամբ առկա է ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում.

3.2) որը նախկինում հանրային ծառայության պաշտոնից ազատվել է կարգապահական տույժի կիրառման արդյունքում, եթե նման տույժի կիրառումից չի անցել մեկ տարի.

3.3) որը տառապում է ոստիկանության ծառայողի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող՝ Կառավարության կողմից սահմանված հիվանդությամբ.

3.4) որը օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն.».

10) 6-րդ մասում «փաստաթղթերի ցանկը» բառերից հետո լրացնել «, թեկնածուների ընտրության» բառերը:

Հոդված 11. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում «պետական դրոշի» բառերը փոխարինել «դրոշի» բառով:

Հոդված 12. Օրենքի 13-րդ հոդվածը՝

5) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանության պետին Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

3. Ոստիկանության պետի տեղակալներին Ոստիկանության պետի առաջարկությամբ նշանակում և ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը:

~~Ոստիկանության զորքերի հրամանատարն ի պաշտոնե Ոստիկանության պետի տեղակալն է:~~».

~~4-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել~~ .

6) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ոստիկանության գլխավոր պաշտոնների խմբի ծառայողներին պաշտոնի նշանակում (ծառայության է ընդունում) և պաշտոնից ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը, իսկ ավագ և միջին պաշտոնների խմբերի ծառայողներին՝ Ոստիկանության պետը:».

7) լրացնել հետևյալ խմբագրությամբ 5.1-ին մասով.

«5.1. Լիազոր մարմնում, վերջինիս ենթակայությամբ գործող պետական այլ մարմիններում կամ ենթակայությանը հանձնված կազմակերպություններում՝ բացառությամբ ոստիկանության, ոստիկանության ծառայողներին պաշտոնի նշանակում (ծառայության է ընդունում) և պաշտոնից ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը:».

8) 9-րդ մասում «մասերով» բառից հետո լրացնել «նախատեսված պայմանների հաշվառմամբ՝ սույն օրենքի 13.1-ին հոդվածով» բառերը:

Հոդված 13. Օրենքի 13.1-ին հոդվածը՝

4) 1-ին մասում «վարչապետի» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով.

5) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին մասով.

«1.1. Ոստիկանության պետի տեղակալներ նշանակելու կամ ազատելու մասին Ոստիկանության պետի առաջարկությունը ներկայացվում է գրավոր և ներառում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները:».

6) 2-7-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել.

4) 8-րդ մասում.

ա. հանել «Ոստիկանության պետի տեղակալներ և » բառերը,

բ. 1-ին և 2-րդ կետերից հանել «Ոստիկանության պետի տեղակալներ կամ » բառերը:

Հոդված 14. Օրենքի 14-րդ հոդվածում՝

8) 3-րդ մասի՝

ա. 2-րդ պարբերությունում «(բարոյական)» բառը հանել.

բ. 4-րդ պարբերության «վերջին մեկ տարին» բառերը փոխարինել «մեկ տարի» բառերով.

9) 3.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

10) 6-րդ մասում՝

ա. «մասնագիտական կամ» բառերից հետո «Կառավարության կողմից» բառերը փոխարինել «տվյալ պաշտոնի անձնագրով» բառերով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ կետեր.

«1.1) ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցված ծառայողները.

1.2) այլ պաշտոնից փոխադրվող (այդ թվում՝ առաջխաղացման կարգով) ոստիկանության ծառայողները.».

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետ.

«2.1) սույն հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերությամբ նախատեսված անձինք.».

դ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված համապատասխան մասնագիտությամբ բարձրագույն կրթություն ունեցող և առաջին անգամ ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները:».

11) 7-րդ մասում «Կառավարության կողմից» բառերը փոխարինել «Պաշտոնի անձնագրով» բառերով.

12) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.2-րդ մաս.

«9.2. Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում առաջնահերթության կարգով պաշտոնի է նշանակվում ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցված ծառայողը:».

13) 10-րդ մասի՝

ա. 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության մարմինների համակարգերի զինծառայողները, քրեակատարողական, փրկարար, հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների ծառայողները, դատախազները, քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող ծառայողները, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայության պաշտոն (այդ թվում՝ ինքնավար պաշտոն) զբաղեցնող ծառայողները, ինչպես նաև վերջին 5 տարիների ընթացքում ոստիկանությունում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) ոստիկանության նախկին ծառայողները: Սույն պարբերությամբ սահմանված դեպքում նշանակումից հետո ծառայողն անցնում է պարտադիր վերապատրաստում:».

բ. 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

գ. 4-րդ պարբերությունում «կասեցվելու» բառը փոխարինել «դադարեցվելու» բառով, իսկ «կամ ոստիկանությունում ծառայության անցնող անձին» բառերը հանել.

14) 11-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 15. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասում «Կառավարությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 16. Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում, 22-րդ հոդվածում, 41-րդ հոդվածի 5-րդ մասում և 48-րդ հոդվածի 1-ին մասում ««Պետական պաշտոններ

զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով» բառերով:

Հոդված 17. Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասում «Ոստիկանության պետի նորմատիվ» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածը՝

3) 1-ին մասում «Կարգապահական խախտման՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունների սահմանն անցնելու դեպքերում» բառերը փոխարինել «Սույն օրենքի 42.1-ին հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում» բառերով.

~~3-րդ մասի 1-ին նախադասությունում «կոպիտ» բառից հետո լրացնել «կամ պարբերաբար կատարված» բառերը.~~

4) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետով՝

«11) սույն օրենքի 39-րդ հոդվածի առաջին և երկրորդ մասերի պահանջները խախտելը:»:

Հոդված 19. Օրենքում լրացնել հետևյալ խմբագրությամբ 42.1-ին հոդված.

«**Հոդված 42.1. Ոստիկանության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը**

2. Ոստիկանության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

5) իր լիազորություններն իրականացնելիս օրենքը խախտելը.

6) սույն օրենքով կամ ոստիկանության գործառույթները կարգավորող այլ օրենքներով նախատեսված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

7) ոստիկանության կարգապահական կանոնագրքով սահմանված կանոնները խախտելը.

8) սույն օրենքի 39-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները խախտելը:»:

Հոդված 20. Օրենքի 43-րդ հոդվածի՝

1) 5-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բացառիկ դեպքերում սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով կարող են հանվել մեկից ավելի կարգապահական տույժերը:».

2) 6-րդ մասի՝

ա.~~1)~~ 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերը կարող է կիրառել նրանց պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցողը:».

բ.~~2)~~ 4-րդ պարբերության 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված կարգապահական տույժերը ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կիրառելու իրավունքը վերապահվում է Լիազոր մարմնի ղեկավարին, իսկ ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ կիրառելու իրավունքը՝ Ոստիկանության պետին:»:

Հոդված 21. Օրենքի 45-րդ հոդվածը՝

5) 1-ին մասը՝

ա. լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1-ին կետով.

«1.1) երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ.»,

բ. 2-րդ կետում «, այդ թվում՝ երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու կապակցությամբ» բառերը հանել,

գ. 9-րդ կետում «, այդ թվում՝ դատարանի դատավճռով ոչ ռեաբիլիտացնող հիմքերով պատժից ազատվելու կամ պատիժը կրելը հետաձգելու» բառերը հանել,

դ. լրացնել հետևյալ խմբագրությամբ 9.1-ին կետով,

«9.1) դիտավորյալ հանցանքի հատկանիշներ պարունակող արարքի առնչությամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ ռեաբիլիտացնող հիմքով.».

6) 1.1-ին մասն ուժը կորցրած ճանաչել.

7) 2-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «(պաշտոնատար անձը)» բառերը.

8) լրացնել հետևյալ խմբագրությամբ 3-րդ մասով.

«3. Ոստիկանության ծառայողին սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ և 9.1-ին կետերով նախատեսված հիմքով ոստիկանությունում ծառայությունից ազատելու դեպքում ոստիկանությունում ծառայության ստաժի մեջ չեն հաշվարկվում պաշտոնավարումը կասեցված լինելու, ազատությունից փաստացի զրկված (ձերբակալված կամ կալանավորված) լինելու ժամանակահատվածները, եթե նշված հարկադրանքի միջոցները կիրառելու մասին որոշումներն օրենքով սահմանված կարգով չեն ճանաչվել ոչ իրավաչափ:»:

Հոդված 22. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «(պաշտոնատար անձը)» բառերը:

Հոդված 23. Օրենքի 47-րդ հոդվածի՝

5) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն~~ներ~~ զբաղեցնող ծառայող~~ներ~~ի՝ Ոստիկանության պետի ծառայության ժամկետը երկարաձգվում է սույն օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված կարգով՝ վարչապետի կողմից՝ Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ, Ոստիկանության պետի տեղակալների դեպքում ծառայության ժամկետը երկարաձգվում է սույն օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված կարգով՝ Լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ Ոստիկանության պետի առաջարկությամբ, իսկ Ոստիկանության զորքերի հրամանատարի դեպքում՝ Հանրապետության նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ և Լիազոր մարմնի միջնորդությամբ:».

6) 3-րդ մասում «Ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով.

7) 4-րդ մասում «եթե Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «եթե համապատասխանաբար Ոստիկանության պետը կամ Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով.

~~4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.~~

~~6)~~8) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիազոր մարմնում, վերջինիս ենթակայությամբ գործող պետական այլ մարմիններում կամ ենթակայությանը հանձնված կազմակերպություններում փորձաքրեագիտական, պրոֆեսորադասախոսական, ծրագրավորման և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի, լրատվական, գիտահետազոտական, բժշկական բնույթի մասնագիտական պաշտոններ զբաղեցնող ծառայողները կարող են ծառայությունը շարունակել մինչև 65 տարին լրանալը:»:

Հոդված 24. Օրենքի 49-րդ հոդվածը՝

4) 1-ին մասի «սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգապահական տույժի ենթարկված ոստիկանության

ծառայողները, ինչպես նաև» բառերը հանել, իսկ «2-3-րդ կետերով» բառերը փոխարինել «2-րդ, 3-րդ, 5-րդ և 7-րդ կետերով» բառերով.

5) լրացնել հետևյալ խմբագրությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցվում են նաև սույն օրենքի 13.1-ին հոդվածով սահմանված կարգով պաշտոնից ազատված՝ ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողները:».

6) 5-րդ մասում «Կառավարությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 25. Օրենքի 54-րդ հոդվածի՝

2) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 54. Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունը».**

3) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունը Լիազոր մարմնի ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որի գործունեության նպատակներն ու խնդիրները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:».

3) 3-րդ մասում «Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 26. Օրենքի 55-րդ հոդվածը՝

4) 1-ին մասում «Ոստիկանական» բառից հետո լրացնել «նախնական և» բառերը.

5) 5-րդ մասում «ոստիկանության կադրային ստորաբաժանման» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով.

6) 10-րդ մասում «հաստատությունում» բառից հետո լրացնել «ոստիկանությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական

ծրագրերով» բառերը, իսկ «Ոստիկանության պետը շնորհում» բառերը փոխարինել «շնորհվում» բառով:

Հոդված 27. Օրենքի 56-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 28. Օրենքի 57-րդ հոդվածում «Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 29. Օրենքի 58-րդ հոդվածի՝

2) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 58. Ոստիկանությունում տեխնիկական սպասարկում իրականացնող և քաղաքացիական աշխատանք կատարող անձինք**»,

2) 1-ին պարբերությունում «տեխնիկական սպասարկում իրականացնող» բառերից հետո լրացնել «և քաղաքացիական աշխատանք կատարող» բառերը:

Հոդված 30. Օրենքի 60.14-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Օրենքով կարող է նախատեսվել քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականություն:»:

Հոդված 31. Օրենքի 60.15-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3) 22-րդ կետով նախատեսված հիմքով քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնից ազատված անձինք.»:

Հոդված 32. Օրենքի 60.27-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22-րդ կետով.

«22) Սույն օրենքի 60.14-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված վերապատրաստումը չանցնելը:»:

Հոդված 33. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ոստիկանության նոր կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերի, 30-32-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը, իսկ 3-րդ, 5-րդ, 8-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 20-րդ, 23-րդ և 28-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում Ներքին գործերի նախարար նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրը ուժի մեջ մտնելու պահից:

6. Սույն մասի ուժի մեջ մտնելուց հետո Ոստիկանության պետը և նրա տեղակալները համարվում են իրենց պաշտոններում պարտականությունները ժամանակավոր կատարողներ և շարունակում են պաշտոնավարել մինչև այդ պաշտոններում նշանակումներ կատարելը:

7. Սույն օրենքի 27-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում Բժշկական օգնության և սպասարկման հարաբերությունները կանոնակարգող նոր իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրը:

8. Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը Ներքին գործերի նախարարի ներկայացմամբ, սույն մասի ուժի մեջ մտնելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, հաստատում է այն պաշտոնների ցանկը (որոնք ներառված չեն ոստիկանության հաստիքացուցակում), որոնց վրա, Ներքին գործերի նախարարության կազմավորման գործընթացի կազմակերպմամբ պայմանավորված, տարածվում են «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի պահանջները: Այդ ցանկում ներառված պաշտոն զբաղեցնող անձինք համապատասխանաբար համարվում են ոստիկանության ծառայող և քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնող քաղաքացիական

ծառայող: Նախարարության կազմավորման ավարտից հետո, Ներքին գործերի նախարարի ներկայացմամբ Հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը դադարեցնում է իրավական ակտի գործողությունը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-442-25.11.2022-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**«Հայաստան» խմբակցություն**	**«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. ***Հոդված 7.*** Օրենքի 5-րդ հոդվածի՝ 1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «3. Ոստիկանության գլխավոր, ավագ, միջին եւ կրտսեր կոչումները շնորհում է ծառայողին ոստիկանության համապատասխան պաշտոնին	Չի ընդունվել: Նախագծային կարգավորումները նախատեսվել են այն տրամաբանությամբ, որ Ոստիկանությունը դառնում է ենթակա պետական մարմին, իսկ վերջինիս պայմաններում համապատասխան	Չի ընդունվել: Նախագծային կարգավորումները նախատեսվել են այն տրամաբանությամբ, որ Ոստիկանությունը դառնում է ենթակա պետական մարմին, իսկ վերջինիս պայմաններում

			նշանակելու կամ որպես սովորող հրամանագրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:». 2) 5-րդ մասը «ցմահ» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքի» բառերով. 3) 8-րդ մասը «հիմքով» բառից հետո լրացնել «, ինչպես նաեւ սույն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված փորձաշրջանի ընթացքում» բառերը:	կոչումը շնորհում է վարչապետը: Բացառություն է կազմում ոստիկանության զորքերի դեպքը, երբ, սահմանադրության ուժով «այլ զորքերի» տրամաբանության մեջ, զորքերի հրամանատարին նշանակում և համապատասխան կոչում է շնորհում նախագահը: Սույն օրենսդրական փաթեթին կհաջորդի ոստիկանական գվարդիա ձևավորելու մասին օրենսդրական նախաձեռնությունը, որի շրջանակներում այս հարցին առանձին անդրադարձ կկատարվի՝ այդպիսով ապահովելու ներհամակարգային նույնաբնույթ կարգավորումների առկայությունը:	համապատասխան կոչումը շնորհում է վարչապետը: Բացառություն է կազմում ոստիկանության զորքերի դեպքը, երբ, սահմանադրության ուժով «այլ զորքերի» տրամաբանության մեջ, զորքերի հրամանատարին նշանակում և համապատասխան կոչում է շնորհում նախագահը: Սույն օրենսդրական փաթեթին կհաջորդի ոստիկանական գվարդիա ձևավորելու մասին օրենսդրական նախաձեռնությունը, որի շրջանակներում այս հարցին առանձին անդրադարձ կկատարվի՝ այդպիսով ապահովելու ներհամակարգային նույնաբնույթ

					կարգավորումների առկայությունը:
2.		**«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. ***Հոդված 8.*** Օրենքի 5.1-ին հոդվածում՝ 1) 1-ին մասում «ոստիկանության պետի» բառերը փոխարինել «լիազոր մարմնի ղեկավարի» բառերով: 2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս. «3.1. Լիազոր մարմնի ղեկավարի միջնորդությունը ներկայացվում է սույն հոդվածի 2-3-րդ մասերով սահմանված պահանջներին համապատասխան:». 3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9-րդ մաս. «9. Նախագահի կողմից ոստիկանության բարձրագույն կոչում շնորհվելու դեպքում Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությունը պետք է	Չի ընդունվել: Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:	Չի ընդունվել: Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:

			պարունակի սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տվյալները:»:		
3.	**«Հայաստան» խմբակցություն** **Կառավարություն**	**«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 12-րդ հոդված**	Նախագծի 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **Հոդված 12.** Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա)» կետում «ռետինե» բառից առաջ լրացնել «կառավարության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան» բառերը:	Մասամբ է ընդունվել: Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում՝ Կառավարության ձևակերպմամբ:	Մասամբ է ընդունվել: Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասում կատարվել է համապատասխան լրացում՝ Կառավարության ձևակերպմամբ:
4.		**«Ոստիկանության զորքերի մասին» օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Նախագծից հանել նախագծի 9-րդ հոդվածը:	Չի ընդունվել: Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:	Չի ընդունվել: Տե՛ս 1-ին կետի մեկնաբանությունը:
«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «աշխատանքային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			միգրացիայի,» բառերը, «շահագործման կանոնների պահպանման ապահովման,» բառերից հետո լրացնել «միգրացիոն գործընթացների կառավարման, համակարգման և իրավիճակի մոնիթորինգի,» բառերը, լրացնել նաև տրանսպորտային միջոցների պետական գրանցման, զենքի հարդարման, հրաձգարանների գործարկման լիցենզավորման ոլորտները, ինչպես նաև հանել տեխնիկական զննության իրականացման լիցենզավորման ոլորտը:		
2.	**Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մաս**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ՝ 1) սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի, որը ուժի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մեջ է մտնում Ներքին գործերի նախարարության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երրորդ ամսվա վերջին աշխատանքային օրը. 2) սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, որն ուժի մեջ է մտնում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոններում վերապատրաստման արդյունքներով պաշտոնների նշանակման վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվանից. 3) սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում Ներքին գործերի նախարար նշանակելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, բացառությամբ գործունեության հիմնական այն ոլորտների, որոնք վերապահված են Արտակարգ իրավիճակների նախարարությանը և չեն		

			առնչվում Փրկարար ծառայության իրավասությանը վերապահված գործունեության ոլորտին վերաբերող գործառույթներին, որոնք ուժի մեջ են մտնում Ներքին գործերի նախարարության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երրորդ ամսվա վերջին աշխատանքային օրը. 4) սույն օրենքի 3-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում Ներքին գործերի նախարարության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող երրորդ ամսվա վերջին աշխատանքային օրը:»:		
3.	**Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետ**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետում «աջակցող մասնագիտական ստորաբաժանումների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ հանցանքների և վարչական իրավախախտումների ոլորտում պետական վիճակագրություն	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ձևավորող ստորաբաժանման)» բառերը:		
4.	**Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մաս**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «6. Սույն հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետում սահմանված աշխատանքային խմբերում նախատեսված պաշտոնները համալրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» 878-Ն որոշմամբ սահմանված կարգով: Այն դեպքերում, երբ այդ պաշտոնները զբաղեցնում են պետական ծառայության պաշտոն զբաղեցրած այն անձինք, որոնք տվյալ պաշտոններին նշանակվել են իրենց զբաղեցրած պաշտոններից ազատվելուց հետո՝ յոթ աշխատանքային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրվա ընթացքում, տվյալ անձինք պահպանում են իրենց աշխատավարձը: Այն դեպքերում, երբ այդ պաշտոնում նշանակվում են մինչ այդ պետական ծառայության պաշտոն չզբաղեցնող անձինք կամ այն անձինք, որոնք պաշտոնից ազատվել են ավելի վաղ ժամկետում, տվյալ անձանց վարձատրությունը սահմանվում է քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների երկրորդ ենթախմբին համապատասխանող սանդղակի առաջին մակարդակի հիմնական աշխատավարձի չափով:»:		
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին եվ 2-րդ հոդվածներ**	Առաջարկվում է 1-ին հոդվածում «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին» արտահայտության փոխարեն կիրառել «համապատասխան	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նախարարության (այսուհետ՝ Լիազոր մարմին)» արտահայտությունը՝ համապատասխանաբար փոփոխելով նաև նախագծի 2-րդ հոդվածը:		
2.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետ**	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում բացառությունը տարածել նաև 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 31-րդ, 32-րդ և 34-րդ հոդվածների վրա, իսկ 3-րդ կետից հանել 22-րդ հոդվածի մասով սահմանված բացառությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	**Նախագծի 10-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ մասում «ճանապարհային ոստիկանության պետի» բառերը փոխարինել «ոստիկանության պետի կողմից լիազորված իրավասու ստորաբաժանման ղեկավարի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	**Կառավարություն**	**Նախագծի 11-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 11-րդ հոդվածում պարեկային	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ծառայության փոխարեն նշել իրավասու ստորաբաժանման մասին:		
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 12-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 12-րդ հոդվածով առաջարկվող Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի «Ոստիկանության զորքերի հրամանատարն ի պաշտոնե Ոստիկանության պետի տեղակալն է:» նախադասությունը հանել, իսկ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը չճանաչել ուժը կորցրած:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետ**	Առաջարկվում է նախագծի 18-րդ հոդվածի 2-րդ կետը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	**Նախագծի 20-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 20-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Բացառիկ դեպքերում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով կարող են հանվել մեկից ավելի կարգապահական տույժերը:		
4.	**Կառավարություն**	**Նախագծի 23-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 23-րդ հոդվածում կարգավորում նախատեսել առ այն, որ Ոստիկանության պետի տեղակալների դեպքում ծառայության ժամկետը երկարաձգվում է Լիազոր մարմնի ղեկավարի կողմից՝ Ոստիկանության պետի առաջարկությամբ, և զերծ մնալ օրենքի 47-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչելուց: Բացի այդ, առաջարկվում է 47-րդ հոդվածի 3-րդ մասում «Ոստիկանության պետի» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով, իսկ 4-րդ մասում «եթե Ոստիկանության պետը» բառերը փոխարինել «եթե համապատասխանաբար Ոստիկանության պետը կամ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:		
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասում «ոստիկանության զորքերի հրամանատարը» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի» բառերը:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 5-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ կետով հետևյալ բովանդակությամբ. «2) Ոստիկանության պետի» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական լիազոր մարմնի ղեկավարի» բառերով»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	**Կառավարություն**	**Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետ**	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:

4.	**Կառավարություն**	**Նախագծի 8-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 3.1-ին կետում «ներքին գործերի լիազոր մարմնի ղեկավարի հրամանով» բառերը փոխարինել «օրենսդրությամբ» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	**Կառավարություն**	**Նախագծի 13-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 13-րդ հոդվածում օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսել ՆԳՆ կանոնադրության ուժի մեջ մտնելու օրը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՁԵՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**«Ձենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Առաջարկվում է համապատասխան օրենքի հետևյալ հոդվածներում Ոստիկանությանը վերապահված լիազորությունները վերապահել Ներքին գործերի նախարարությանը՝ 2-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետ, 16-րդ հոդվածի 6-րդ մաս, 18-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հոդվածի 1-ին մաս, 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետեր, 24-րդ հոդվածի 2-րդ մաս, 28-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ և 20-րդ մասեր, 29-րդ հոդվածի 4-րդ մաս, 33-րդ հոդվածի 2-րդ, 7-րդ և 10-րդ մասեր, 34-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասեր:		
ՋԵՆՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի նոր 3-րդ հոդված**	Առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 3.** Օրենքի 12-րդ հոդվածի 8-րդ մասում «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը» բառերով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված** **/նոր 4-րդ հոդված/**	Առաջարկվում է նախագծի 3-րդ (նոր 4-րդ) հոդվածով առաջարկվող օրենքի՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			1) 18-րդ հոդվածի 2-րդ մասի է) կետում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի» բառերով, 2) 19-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության ոստիկանության» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի» բառերով:		
«ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկվում է 1-ին հոդվածը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»					
1.	**Կառավարություն**	**Նախագծի նոր 1-ին հոդված**	Առաջարկվում է նախագիծը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			լրացնել նոր 1-ին հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ՝ **«Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» 2005 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-85-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**ծառայողական քննություն իրականացնող անձ՝** ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման ծառայող կամ ծառայողների խումբ.»: Ըստ այդմ, նախագծի 1-ին հոդվածով նախատեսված դրույթը ձևակերպել որպես 2-րդ հոդված:		

2.		**Նախագծի 4-րդ (նոր 5-րդ) հոդված**	Առաջարկվում է նախագծի 4-րդ (նոր 5-րդ) հոդվածով առաջարկվող օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասում լրացնել նաև ««բ»,» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.		**Նախագծի նոր 6-13-րդ հոդվածներ**	Առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 6-13-րդ հոդվածներով՝ հետևյալ բովանդակությամբ. **«Հոդված 6.** Օրենքի 12-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել: **Հոդված 7.** Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Կարգապահական տույժ կիրառելու իրավունք ունեցող անձանց կողմից ծառայողական քննություն նշանակելու մասին համապատասխան հրամանները ներքին գործերի բնագավառում պետական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կառավարման լիազոր մարմնին փոխանցելու ընթացակարգը սահմանում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը:»: **Հոդված 8.** Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Ծառայողական քննության ընթացքում հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու դեպքում ծառայողական քննության նյութերը ուղարկվում են նախաքննության մարմին:»: **Հոդված 9.** Օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասում «ոստիկանության մեկ այլ ստորաբաժանում» բառերը փոխարինել «Ոստիկանություն» բառով:		

			Հոդված 10. Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում «ոստիկանության պահպանման» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի պահպանման» բառերով: **Հոդված 11.** Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Ծառայողական քննությունն անցկացվում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի վարչական շենքում կամ Ոստիկանության համապատասխան ստորաբաժանման գտնվելու վայրում:»: **Հոդված 12.** Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Բողոքարկման		

			վարույթն իրականացնում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումը՝ ծառայողական քննության նյութերի հիման վրա:»: **Հոդված 13.** Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած:»:		
4.		**Նախագծի 5-րդ (նոր 14-րդ) հոդված**	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«Հոդված 14.** Օրենքի 43.1-ին հոդվածում՝ 1) 1-ին մասում «քննության են առնվում ոստիկանության» բառերը փոխարինել «կարող են քննության առնվել» բառերով. 2) 2-7-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած. 3) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«8. Կարգապահական հանձնաժողովի կազմը և գործունեության կարգը սահմանում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը:»:		
5.		**Նախագծի նոր 15-րդ հոդված**	Առաջարկվում է նախագիծը լրացնել նոր 15-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 15. Օրենքի 46-րդ հոդվածում «ոստիկանության ստորաբաժանումում» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանումում» բառերով:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	**Կառավարություն**	**Նախագծի 6-րդ (նոր 16-րդ) հոդված**	Առաջարկվում է նախագծի 6-րդ (նոր 16-րդ) հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մտնում ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից:»:		
«ՕՏԱՐԵՐԿՐԱՅԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից հանել «, ինչպես նաև միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմնին» բառերը, իսկ 6-րդ մասի 2-րդ և 3-րդ պարբերություններում «, միգրացիայի բնագավառում լիազորված պետական մարմինը» բառերը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					

1.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկվում է 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրվանից:»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկվում է 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասում «ոստիկանության ոլորտում լիազոր պետական կառավարման մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

«ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 4-րդ հոդվածի 13-րդ մասում «ոստիկանության ոլորտում լիազոր պետական կառավարման մարմնի ղեկավարը» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մաս**	Առաջարկվում է նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասում «տասը օր հետո» բառերից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի՝ Օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ և 13-րդ կետերն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ կարգավորումների և սույն օրենքի 9-րդ հոդվածի,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որոնք ուժի մեջ են մտնում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության քաղաքացիական ծառայության պաշտոններում վերապատրաստման արդյունքներով պաշտոնների նշանակման վերջին օրվան հաջորդող աշխատանքային օրվանից» բառերը:		
«ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ԿԱՄ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՂ ՍԱՐՔԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 1-ին հոդված**	Առաջարկվում է «Պարեկային ծառայություն» բառերը փոխարինել «պետի կողմից լիազորված իրավասու ստորաբաժանում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**Կառավարություն**	**Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մաս**	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը հետևյալ խմբագրությամբ. «2. Մինչև Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության լուծարումը Օրենքում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«ոստիկանության պետի կողմից լիազորված իրավասու ստորաբաժանում» բառերը կարդալ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն»:»:		
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 9.1-ին հոդվածում՝ ՆԳՆ լիազորություններում, նախատեսել նաև հետևյալը. «վերահսկողություն է իրականացնում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ և ձեռնարկում օրենքով նախատեսված միջոցներ, տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ տեխնիկական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			փորձաքննությամբ հսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում դրանց տեխնիկական վիճակի և կահավորման անվտանգության ապահովման նկատմամբ, ձեռնարկում օրենքով նախատեսված միջոցներ, հսկողություն է իրականացնում ճանապարհները և դրանց ինժեներական կառույցները, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները տեխնիկական նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու նկատմամբ, ներկայացնում հայտնաբերված խախտումների վերացման պահանջներ»:		
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մաս**	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «տասը օր հետո» բառերից հետո լրացնել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում Ներքին գործերի նախարարության կանոնադրությունը ուժի մեջ մտնելու օրը» բառերը:		
«ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Նախագծի նոր 2-րդ հոդված**	Առաջարկվում է լրացնել նոր հոդված՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասում և 72-րդ հոդվածի 1-ին մասում «նախարարության,» բառերից հետո լրացնել «ներքին գործերի նախարարության» բառերը, իսկ «, ոստիկանության» բառերը հանել»: Ըստ այդմ՝ առաջարկվում է խմբագրել նախագծի վերնագիրը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՄԱՍՆԱՎՈՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	**Կառավարություն**	**Օրենքի 16-րդ և 18-րդ հոդվածներ**	Առաջարկվում է փաթեթը լրացնել «Մասնավոր պահնորդական գործունեության	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մասին» օրենքում փոփոխություններ նախատեսող նախագծով, որով օրենքի 16-րդ հոդվածում և 18-րդ հոդվածի 2-րդ մասում «ոստիկանության պետի» բառերը կփոխարինվեն «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի» բառերով:		
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹ					
1.	**Կառավարություն**	**Նախագծերի փաթեթ**	Առաջարկվում է փաթեթում շտկել տառասխալները, վերանայել հոդվածների, մասերի համարակալումները:	Ընդունվել է:	Ընդունվել է: